

7255

||

891.99


f-24

1086. ^{արտ} 1086
"Մեծ Հայաստանի Կորյունը" ^հ
Ո Ղ Բ 1086

202

ՄՏԵՓԱՆՆՈՍ ԿՈՐՆԹԵԼԵԱՆՅԻ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն



Գ Ր Ե Կ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Армянский Науч
СССР

ԳԵՈՐԳ ԶՉԼՐԱԲԵՍՆ ԲՍՂԳՍՍԱՐԵՍՆՅ

Ջ Կ Է Ե Կ Ե



2011



ԹԻՖԼԻՍ

12003

Տպարան Մովսես Վարդանեանի

1889

891.99
Բ-24

Доз. ценз. Тифлисъ, 6-го Мая 1889 года.

Типографія М. Варганянца, Тройц. пер. д. № 11.


Ո Ղ Բ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԿՈՐՆԹԵԼԵՍԱՆՅԻ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

1. Հաղար ութհարիւր ութսուն եւ իննին,
Փետրվար ամսի տասն եւ իննին,
Բարիկենդան գիշերն էր՝ ժամը իննին,
Զոհ գնաց անմեղ երիտասարդն հրացանին:
2. Անգութ հրացանն արդէն վաղ էր սլաորաստ,
Նորա լցնողն էր Ստեփանն երիտասարդ.
Ամենիցն ընդունւածն էր, ծնողացն հարազատ,
Բայց անգութ հրացանն խլեց ծնողներիցն հա-
րազատ:
3. Հրացանն արձակեց. գնտակը կուրծքը խրեց,
Անբախտ երիտասարդն գետնին փռեց.
Սմբողջ հինգ ժամ արիւնումն շաղախեց,
Հայրն լսեց առիւծի ձայն արձակեց:

4. Այդ գիշերն պատեց խաւար, տխրութիւն,
Ողբ, աղաղակ, սուգը պատեց ամենուն.
Մի կողմից զրկանք, մի կողմից վայնաստուն,
Պատեց Ջահուկ գիւղին մեծ տխրութիւն:
5. Մատաղ որս էի հրացանի առաջին,
Ինձ շատ չարչարեց կեանքս թանկագին,
Արեան ծովի մէջն ընկած լողացի՝
Հանգիստ մահ կուգէր իմ անմեղ հոգին:
6. Կ'սառչունչ փուլած էի ես գեամին,
Աչքերս ուղղելով խանութի դռնին,
Անզօր էի, չէի կարող տեղիցս ժամ գալ,
Փշրւած էին կուրծքիս սիւներն:
7. Հրացանի գնտակն Նախիջեւանից էր բերւած,
Անմեղ գառնուկի մարմինն արեան մէջ շաղւած,
Հայրն ու մայրն ձեռներն ծոցին շիւարած,
Անգութ հրացանի գնտակովն էր նա քնած:
8. Անունն էր Ստեփան, Ջահուկայ գիւղից,
Ազգն Կորնթեւեան Դանիէլի տոհմից, 50443-ահ
Գասներկու հասակումն էր, ոչ աւելի մեծ.
Թողեց վերջին բարեաւ, ցան էր մեծ:
9. Ասլիխան մայրս էր ինձ տեսնելով,
«Վայ իմ Ստեփանիկ, ինչու ես քեզ չեմ տեսնում»
ասեց գոռալով.



36092-66 9

- Օղբ թնդացրեց նորա աղաղակ,
Ստեփան ձայն տալով, մտազերն փետելով:
10. Զարթիր անկողնիցդ, անուշիկ որդեակ,
Թշուտ ծնողացդ պաշտելի հոգեակ,
Նախշուն աչքերդ բաց արա՛ խօսիր,
Քեզ կարօտցել եմ, քնքոյշ աղաւնեակ:
 11. Մահ, մահ, անգութ մահ, արի ինձ էլ տար,
Ել ինչպէս ապրիմ մայրս ջրատար.
Մատաղ գառն՝ Ստեփանը՝ զոհ է գնացել,
Չարչարւած, տանջւած, ո՛հ, անգթաբար:
 12. Իմ հրեշտակիս հեան ինձ էլ թագեցէք,
Երկուսիս համար մէկ տեղ փորեցէք,
Այս անգութ հրացանը մեզ ինչ օրի հասցրեց,
Այդպէս զոհ տանող գէնքին անէ՛ծք կարգացէք:
 13. Երբ ինձ տեսաւ մայրս, փուլեց գեամին,
Զուրը սրկեցին նրա երեսին.
Բոլոր ժողովուրդը ի խորոց սրտէ,
Խղձալով նրան, վայ տըլին գլխին:
 14. Մնացիր բարեաւ՝ մայր իմ սիրելի,
Առ վերջին բարեւս հայր իմ յարգելի,
Բաշխեցէք խեղճիս ձեր աշխատութիւն,
Զոր վայելած եմ ես միշտ լի ու վի:

50443-ԱԿ

15. Ձեր զոհած որդուն տարէք թաղեցէք,
 Հրացանից փշրած մարմինս ծածկեցէք,
 Եւ մի փոքր սեւ գերեզմանաքար,
 Անմոռաց շուտով վերաս քաշեցէք:
16. Դանիէլ, իմ հայր, պաշտելիդ,
 Արի օգնութեան հասիր Ստեփանիդ,
 Իշխերները տապն անգամ ծածկում էիր,
 Որ չըմբսէ սեղմրած կրծքիդ:
17. Մյժմ արի տես քո սիրելի Ստեփանին,
 Սյլանդակ դէմքով ընկած է գետնին.
 Զրկրւած տանից եւ զուրկ ձեզանից,
 Սրդէն զուրկ էր նա աշխարհի փառքից:
18. Անդգայ էակք ինձ վերայ կույան,
 Տեսնելով տանջանքս եւ իմ տառապանք.
 Մի՛թէ ինձ հողից դու չես ստեղծել,
 Որ չես տար հոգւոյս հանգիստ յաւիտեան:
19. Ոչխարաց պահնորդ, հովիւ հասարակ,
 Իւր հօտի վերայ տքնի շարունակ.
 Թող չի տալ որ գայը գառին պատառէ,
 Իւր կեանքը ձգում է հրացանի տակ:
20. Սարսափում է հոգիս մտտիկ կէս գիշեր,
 Իմ աղերսանքներս երկինք չի լսեր,

- Ահա թնդաց հրացանի ձայնն,
 Բայց հրացանին գուլթ չունէր այդ գիշեր:
21. Մահն էլ անգուլթ է, ինձ մտտիկ չի գար,
 Կարծես ուզում էր տանջել չարաչար,
 Զրւարձանում էր խեղճ Ստեփանիս վերայ,
 Գնտակն չէր ուզում տալ վերջ իմ կեանքիս լար:
22. Աչքիս լոյսն պակսեց, կարծես լի արիւն,
 Հրացանն խլեց իմ կեանքիս գարուն.
 Զրգիտեմ պէտք է արդարն պատժուի,
 Թէ աշխարհքումն ման գայ երեւուն:
23. Այս Ստեփանն էր ծաղիկ հասակում,
 Մահամերձ վիճակը կրեց իւր կեանքում,
 Հրացանի գնտակին զոհ գնաց անմեղ,
 Որի մահուն Վասակ գարձաւ իւր կեանքում:
24. Հայր, մայր կանչում է, անխ, լսող չրկայ,
 Օգնութեան մի ձեռք կարկառող չրկայ,
 Սիրտս է փշրւած, գնտակը կուրծքիս,
 Զուր էի ուզում, ջուր տըռող չրկայ:
25. Ասում էի. «անխ, արի սիրուն մայր,
 Տանջանքից փրկիր, խեղճ Ստեփանիդ տար,
 Անտէր, անընկեր խաւարումն ընկած,
 Պատկերդ տեսնելու էլ չունիմ հնար:

Տոյ 24 -- 8 -- ՄԺ (arm 1086

7255

- 26. Մտաւ արեւս երջանկութեան,
Գլխիս պատեց մութ,
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս
Խնձնից անցան շուտ:
- 27. Զոր ուխտեալ էի, մնաց իմ սրտիս,
Զէ վասն եւ եթ իմ անձիս,
Մաղթեմ հայրիս եւ մայրիս առանձին,
Եղբայրքս եւ քոյրքս յիշեն եւ դիս:
- 28. Մենք էլ գրենք մի բանի տխուր տողեր,
Թող կարգացողն յիշէ անդադար,
Զունիմ այնքան իմաստութիւն շատ գրել,
Մենք էլ կրպահենք Ստեփանի յիշատակն
անմեռաց:

202

БИБЛИОТЕКА
 ИСТОРИЯ
 МОСКОВСКОГО
 УНИВЕРСИТЕТА
 СССР

2013

